ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԾԵՐԸ

DOI: 10.52174/2579-2989_2024.3-50

Սամվել ԱՎԵՏԻՍՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1978 թ. գերազանցությամբ ավարտել է ՀԳԻ տնտեսագիտական ֆակուլտետը, աշխատել արտադրությունում և սովորել ասպիրանտուրայում: 1990 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 2003 թ.՝ դոկտորի գիտական աստիճան, 2007 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1999 թ. ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր: 2002-2011 թթ. աշխատել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ: 2013 թ.-ից աշխատում է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում, նախ՝ զբաղեցնելով տնօրենի և սոցիալ-տնտեսական ծրագրերի համակարգողի, ապա 2016 թ.-ից՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագրի տնօրենի պաշտոնները: Ներկայում նույն կենտրոնի ավագ փորձագետ է:

Հեղինակ է շուրջ 170 գիտական հոդվածների, 21 մենագրությունների և ուսումնական ձեռնարկների:

https://orcid.org/0000-0002-3019-4075

Հիմնաբառեր. *Եվրամիություն, գյուղատնտեսություն, Ռումինիա, ընդհանուր գծեր, Հայաստան, արդյունավետություն, ծրագրեր*

ԵՄ երկրներից Ռումինիան գյուղատնտեսության կազմակերպման առանձնահատկություններով առավել մոտ է Հայաստանին: Ինչպես Հայաստանում, այնպես էլ Ռումինիայում բավական մեծ թիվ են կազմում հողի սեփականատերերը (մոտ 2,84 մլն), և համեմատաբար փոքր է մեկ տնտեսության հաշվով հողատարածության չափը, որը բացասաբար է ազդում գյուղատնտեսության արդյունավետ կազմակերպման վրա: Ռումինիայի գյուղատնտեսությունը նախկին սոցիալիստական երկրների գյուղատնտեսությունից տարբերվում է նրանով, որ հողերի մասնատվածության աստիճանը շատ բարձր է, իսկ մեքենայացման մակարդակը՝ համեմատաբար ցածր: Բավական է նշել, որ մեկ տրակտորին բաժին է ընկնում շուրջ 53 հա մշակովի հող, իսկ ԵՄ-ում այդ ցուցանիշը 14 հեկտար է: Միաժամանակ, Ռումինիան աչքի է ընկնում համեմատաբար հարթ ռելիեֆով, բերրի հողերով և գյուղատնտեսության համար բարենպաստ կլիմայով:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել ԵՄ երկրներից Հայաստանի գյուղատնտեսության պայմաններին համեմատաբար մոտ գտնվող Ռումինիայի ագրարային ոլորտը, կատարել որոշակի համեմատություններ, փորձել գտնել նմանատիպ հիմնախնդիրներն ու դրանց լուծման առանձնահատկությունները:

Ռումինիան գտնվում է Հարավարևելյան Եվրոպայում և հիմնականում զբաղեցնում է Տրանսիլվանիայի հայտնի պատմական շրջանը, որը բոլորված է Կարպատյան լեռներով: Երկրի բնակչությունը 2024 թ. հունվարի 1-ի տվյալներով 19,73 մլն է, տա-

րածքը՝ 238,397 ք. կմ: Ռումինիան ունի զարգացած արդյունաբերություն և գյուղատնտեսություն: Արդյունաբերության մեջ առաջատար են հանքարդյունահանումը, նավթավերամշակումը, սև ու գունավոր մետաղաձուլությունը, մեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը: Արտադրվում են տարատեսակ սարքավորումներ, հաստոցներ, ավտոբուսներ, բեռնատար ու մարդատար ավտոմեքենաներ, երկաթուղային տրանսպորտի միջոցներ, նավեր, տրակտորներ, կահույք և այլն:

2007 թվականին՝ Եվրամիությանն անդամակցելուց հետո, Ռումինիան եվրոպական հիմնադրամներից ստացել է ավելի քան 89,4 միլիարդ եվրո[1]: ԵՄ-ին անդամակցելուց ի վեր, մինչև 2023 թվականի սեպտեմբեր Ռումինիայի միջին տարեկան տնտեսական աճը 3,04% էր, մինչդեռ ԵՄ միջին ցուցանիշը՝ 1,2%: Բացի այդ, այս ընթացքում տնտեսության մեջ նվազագույն աշխատավարձը 2007 թվականի հունվարի 1-ի 390 լեյից 2024 թվականի հունվարի 1-ին հասել է 3300 լեյի[2]:

Ռումինիայում գյուղատնտեսությունն ազգային տնտեսության կարևոր ոլորտներից է: Վերջին տարիներին գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում տարեկան միջինը 6% է: Ռումինիան զբաղեցնում է Եվրամիության տարածքի 7%-ը, կլիման բարեխառն մայրցամաքային է, տարեկան միջին տեղումները տատանվում են. հարթավայրերում՝ մոտ 500 մմ, հովիտներում՝ 700 մմ և լեռնային շրջաններում՝ 1000–1400 մմ:

Ռումինիայում օգտագործելի ջրային ռեսուրսները մեկ անձի հաշվով տարեկան կազմում են մոտավորապես 2,660 մ^3/մարդ, որը ԵՄ միջին ցուցանիշի (ավելի քան 4000 մ^3/մարդ) համեմատությամբ բավական ցածր է, և երկիրը դասվում է ցածր ջրային ռեսուրսներ ունեցող երկրների շարքին: Ռումինիայի ընդհանուր ջրային ներուժը մոտ 140 մլրդ մ^3/տարի է, որից օգտագործվում է 20,4 մլրդ մ^3/տարի: Այդ քանակությունից մոտ 8 մլրդ մ^3-ն օգտագործվում է արդյունաբերական սպառման, 7 մլրդ մ^3-ը՝ ոռոգման, 2,2 մլրդ մ^3-ը՝ ձկնաբուծության/ակվակուլտուրայի և 3,4 մլրդ մ^3-ը՝ տնային տնտեսություններում սպառման համար[3]: Միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում Ռումինիայի գյուղատնտեսության ոլորտների կարիքների բավարարումն անհնար է առանց 1990-ականներից առաջ ձևավորված լայնածավալ հիդրոտեխնիկական կառույցների վերականգնման ու շահագործման:

Ռումինիայի կլիման բարեխառն մայրցամաքային է՝ տարածաշրջանային զգալի տատանումներով: Գյուղատնտեսության համար բարենպաստ ժամանակաշրջանները փոխարինվում են սաստիկ երաշտի ժամանակաշրջաններով:

Այդուհանդերձ, համեմատաբար հարթ ռելիեֆը և բարեխառն կլիման նպաստում են գյուղատնտեսության բնականոն զարգացմանը: Ռումինիայի գյուղատնտեսության մեջ գերակշռում է բուսաբուծությունը. մշակվում են եգիպտացորեն, ցորեն, տարեկան, արևածաղիկ, շաքարի ճակնդեղ և այլն: Զարգացած են նաև բանջարաբուծությունը, պտղաբուծությունը, խաղողագործությունը, մսատու անասնապահությունը, մեղվաբուծությունը, շերամապահությունը, ձկնորսությունը:

Գյուղատնտեսական նշանակության հողերի ավելի քան 64%-ը բաժին է ընկնում վարելահողերին: Հայաստանում վարելահողերը գյուղնշանակության հողերի ընդամենը 21,7%-ն են, իսկ 57,3%-ը զբաղեցնում են արոտավայրերը և խոտհարքերը: Այս կերային հանդակները Ռումինիայում ընդամենը 33%-ն են (աղյուսակ 1):

Հայաստանի Հանրապետությունում դեռևս պաշտոնապես չի հաստատվել գյուղատնտեսական գործունեություն իրականացնող տնտեսությունների վարչատարածքային դասակարգումը: Իսկ Ռումինիայում ընդունված է տնտեսությունները դասակարգել չորս խմբի. 1) փոքր՝ մինչև

[1] Румыния получила более €89 млрд из европейских фондов после вступления в ЕС, https://newsmaker.md/rus/novosti/rumyniya-poluchila-bolee-e89-mlrd-iz-evropeyskih-fondov-posle-vstupleniya-v-es/

[2] Նույն տեղում:

[3] Национальная стратегия цифровой повестки дня Румынии до 2020 г. (Strategia Națională privind Agenda Digitală pentru România 2020): https://epale.ec.europa.eu/sites/default/files/strategia-nationala-agenda-digitala-pentru-romania-20202c-20-feb.2015.pdf

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Ռումինիայի[4] և Հայաստանի[5] գյուղատնտեսական նշանակության հողերի տարածությունը և կառուցվածքը (Ռումինիա՝ 2020 թ., Հայաստան՝ 2022 թ.)

Հ/Հ	Հողատեսքերը	Ընդամենը տարածքը, հազ. հա		Կառուցվածքը, %	
		Ռումինիա	Հայաստան	Ռումինիա	Հայաստան
1.	Ընդամենը գյուղնշանակության հողեր	14,620	2,042,1	100	100
	Որից՝				
1.1.	վարելահողեր	9,395	442,7	64,26	21,67
1.2.	բազմամյա տնկարկներ	397,2	39,2	2,71	1,92
1.3.	արոտավայրեր	3,272	1049,7	22,36	51,40
1.4.	խոտհարքեր	1,556	121,2	10,64	5,93
1.5.	այլ հողեր	տ/չ	389,3	տ/չ	19,06

1 հա հողատարածությամբ, 2) տնամերձ օժանդակ՝ 1-10 հա հողատարածությամբ, 3) ընտանեկան՝ 10-100 հա հողատարածությամբ և 4) առևտրային՝ 100 հա-ից ավելի հողատարածությամբ: Ինչպես երևում է աղյուսակ 2-ի տվյալներից, ամենատարածվածները (շուրջ 1,850 մլն կամ ընդհանուրի 54 տոկոսը) փոքր տնտեսություններն են, որոնց բաժին է ընկնում 0,640 մլն հա մշակվող հողատարածություն: Այս առանձնահատկությամբ Հայաստանը նման է Ռումինիային, քանի որ ՀՀ գյուղատնտեսության համատարած հաշվառման տվյալներով՝ 2014 թ.-ին տնտեսությունների ընդհանուր թվի ավելի քան 42%-ն ուներ մինչև 1 հա հողատարածություն[6]: Երկրորդ խմբի՝ 1-10 հա հողատարածություն ունեցող տընտեսությունների ընդհանուր թիվը 1,480 մլն է, որոնց բաժին է ընկնում մշակվող հողատարածության շուրջ 34%-ը: Մոտ 0,075 մլն տնտեսություն դասվում է երրորդ՝ 10-100 հա, իսկ մոտ 0,012 մլն տնտեսություն՝ 100 հա-ից ավելի հողատարածություն ունեցող տնտեսությունների խմբին:

Ռումինիայում 1989 թվականի հեղափոխությունից հետո, ավելի քան երեք տասնամյակների ընթացքում գյուղատնտեսական տնտեսություններում տարեկան ներդրումների միջոցով հիմնական միջոցների կուտակումը կազմել է 33 եվրո/հա/տարի, որը բավական ցածր ցուցանիշ է ԵՄ զարգացած երկրների համեմատությամբ: Օրինակ՝ Ֆրանսիայում այդ ցուցանիշը կազմել է 308 եվրո/հա/տարի: Ավելին, ռումինացի ֆերմերների ֆոնդաապազինվածության ցուցանիշն ընդամենը 3600 եվրո/մարդ է, իսկ Ֆրանսիայում՝ 290000 եվրո/մարդ[7]:

ԵՄ միջին ցուցանիշի համեմատ Ռումինիայում գյուղատնտեսական հողերի մեկ հեկտարի համար ծախսերը 46%-ով ցածր են, որը վկայում է ինտենսիվության համեմատաբար ցածր մակարդակի մասին: Հատկապես պակաս ծախսեր են կատարվում քիմիական պարարտանյութերի և բույսերի պաշտպանության միջոցների օգտագործման համար: Քիմիական պարարտանյութերի քանակական սպառումը վերջին 12 տարիների ընթացքում փոքրինչ աճել է (6%): Գյուղատնտեսական տեխնիկայի պարկի աննշան աճ է արձանագրվում հիմնականում գյուղատնտեսական տնտեսությունների արդիականացման համար նախատեսված SAPARD և PNDR ծրագրերով հատկացված միջոցների հաշվին: Նշենք, որ, 2021 թ.-ին, 2011 թ.-ի համեմատ, տրակտորների թիվն ավելացել է 6%-ով, իսկ կոմբայններինը և ինքնագնաց սերմնացաններինը՝ ընդամենը 1%-ով[8]:

[4] National Institute of Statistics, Tempo online database, Available at: http://statistici.insse.ro:8077/tempo-online/

[5] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2023 թ., https://armstat.am/file/doc/99541108.pdf

[6] ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գյուղատնտեսության համատարած հաշվառման հիմնական արդյունքները, Եր.: «Տիգրան Մեծ», 2016. էջ 57:

[7] Поддержка развития сельских районов Румыния - Европейская комиссия https://ec.europa.eu/agriculture/rural-development-previous

[8] Лукиан В. "Стратегические подходы преодоления сдерживающих факторов экономического развития АПК: на примере Румынии"// Научный сетевой журнал «Столыпинский вестник» № 9/2022 file:///C:/Users/Amberd/Downloads/strategicheskie-podhody-preodoleniya-sderzhivayuschih-faktorov-ekonomicheskogo-razvitiya-apk-na-primere-rumynii.pdf

Ինչ վերաբերում է մեկ հեկտարի դիմաց սերմացուի սպառմանը, ապա դրա արժեքը բարձր է ԵՄ միջինից (72,1 եվրո/հա՝ Ռումինիայում և 64,8 եվրո/հա՝ ԵՄ-27 երկրներում): Սա, հավանաբար, պայմանավորված է Ռումինիայում դիլերների կողմից գանձվող ավելի բարձր գներով: Հավաստագրված սերմերի ռումինական շուկայում, ինչպես և Հայաստանում, գերակշռում են հիմնականում արտասահմանյան սորտերը և հիբրիդները: Տեղական սերմեր շատ քիչ են բազմացվում՝ դրանց ցածր պահանջարկի, արհեստավարժ կադրերի պակասի և պատշաճ ֆինանսավորման բացակայության պատճառով: Օրինակ՝ Ռումինիայում բանջարեղենի մշակությունը կատարվում է բացառապես ներմուծվող սերմերի օգտագործմամբ: Այնուամենայնիվ, արդյունաբերական ծավալներով բանջարեղեն արտադրելու համար փոքր ֆերմերները, սովորաբար, օգտագործում են չհավաստագրված սերմեր կամ հիբրիդներ, որոնք բերվում են հարևան երկրներից (հիմնականում՝ Բուլղարիայից): Այս միտումը բնորոշ է Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասին[9]:

Ինչպես Հայաստանում, այնպես էլ Ռումինիայում գյուղատնտեսության զարգացմանը խանգարում է հողերի բարձր մասնատվածությունը: Բավական է նշել, որ Ռումինիայի գյուղացիական տնտեսությունների գրեթե 75%-ն ունի 2 հեկտարից պակաս

ՆԿԱՐ 1

Ռումինիայի Տարնավայի հովիտը

տարածք, իսկ մինչև 10 հեկտար տարածք ունեցող տնտեսություններին բաժին է ընկնում ընդհանուր օգտագործման հողամասերի 98%-ը: Հակառակ ծայրահեղությունն է նկատվում 100 հա-ից ավելի գյուղացիական տնտեսություններում, որոնք բոլոր տնտեսությունների ընդամենը 0,5%-ն են, սակայն շահագործում են գյուղատնտեսական նշանակության հողերի 49%-ը[10]: Այս խնդիրն առկա է նաև Հայաստանում, ուստի դրա կարգավորման լավագույն տարբերակը գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման խթանումն է: Իհարկե, այս հարցի կարգավորման համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև տնտեսությունների մասնագիտացումը: Ռումինիայում գերակշռում են հացահատիկային տնտեսությունները, որոնց խոշո-

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Ռումինիայի գյուղատնտեսական գործունեություն իրականացնող տնտեսությունների խմբավորումն ըստ հողատարածության չափերի[11]

Տնտեսությունների ձևերը	Խմբավորումն ըստ չափերի, հա	Տնտեսությունների թիվը խմբում և ընդհանուր թվի մեջ, %	Մշակվող տարածությունը և ընդհանուր տարածությունից %-ը
Փոքր տնտեսություններ	<1 հա	1,850 մլն (54%)	0,640 մլն հա (5.1%)
Տնամերձ օժանդակ տնտեսություններ	1-10 հա	1,480 մլն(43.4%)	4,250 մլն հա (34,0%)
Ընտանեկան տնտեսություններ	10-100 հա	0,075 մլն (2.2%)	1,630 մլն հա (13.1%)
Առևտրային տնտեսություններ	>100 հա	0,012 մլն (0.4%)	5,97 մլն հա (47.8%)

[9] Экспортная стратегия Румынии на 2021-2025 гг. с развитием до 2030 г., Министерство экономики Румынии, 2020 г.; https://www.revistamobila.ro/tag/strategia-de-export-a-romaniei-2021-2025/

[10] Նույն տեղում:

[11] Quo vadis, агро Румынии? https://agroportal.ua/ru/blogs/quo-vadis-agro-rumynii

րացման հնարավորությունն ավելի մեծ է, քան Հայաստանի այգեպտղաբուծական և բանջարաբոստանային տնտեսություններում: Բայց վերջիններիս հիման վրա, սկսած արտադրությունից մինչև բերքի իրացումն ու վերամշակումը, կոոպերատիվների կազմակերպումը միանգամայն արդյունավետ է:

Ռումինացիների մոտ 12 տոկոսը զբաղված է գյուղատնտեսության հետ կապված գործունեությամբ, մինչդեռ Եվրամիության (ԵՄ) անդամ երկրներում այդ ցուցանիշը միջին հաշվով 4% է: Ռումինիայի 2,9 միլիոն հողատերերը ԵՄ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողների մեկ երրորդն են: Դա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ Ռումինիայում գյուղացիական տնտեսությունների միջին չափը 4,42 հա է, ԵՄ-ում՝ 15 հա:

Վերջին տարիներին Ռումինիայում հողի ցածր գինը և բարձր բերրիությունը, էժան աշխատուժը գրավում են օտարերկրյա ներդրողների ուշադրությունը: Սոցիալիստական շրջանում Ռումինիան ուներ ոռոգման զարգացած համակարգ, սակայն վերջին հողային բարեփոխումներից հետո ինչպես Հայաստանում, այնպես էլ այս երկրում ոռոգման ենթակառուցվածքները քայքայվել են: Ներկայում օգտագործվում է 6200 մղոն երկարությամբ ոռոգման ներքին ցանցի 20%-ից պակաս մասը, որը ոռոգում է վարելահողերի մոտ 10%-ը[12]: Այս իրավիճակը կարգավորելու համար Ռումինիայի գյուղատնտեսության և գյուղի զարգացման նախարարությունը 2022-2027 թվականների կտրվածքով սկսել է իրագործել 1,6 միլիարդ ԱՄՆ դոլարի ծրագիր՝ ոռոգման առաջնային ջրանցքների վերականգնման նպատակով: Սակայն, հատկացված գումարը բավարար չէ ամբողջ ոռոգման ցանցի վերականգնման և արդիականացման համար: Ուստի Ռումինիան Եվրահանձ-նաժողովից 0,5 միլիարդ ԱՄՆ դոլարի լրացուցիչ միջոցներ է խնդրել 2020-2027 թվականների ընդ-

ՆԿԱՐ 2

Հացահատիկը՝ որպես Ռումինիայի գյուղատնտեսության հիմնական մշակաբույս

հանուր գյուղատնտեսական քաղաքականության շրջանակի ներքո երկրորդային ոռոգման ջրանցքների վերականգնման համար:

Բնակչության մեկ շնչին բաժին ընկնող վարելահողերով Ռումինիան ԵՄ երկրներում 0,41 հա/մարդ ցուցանիշով 6-րդ տեղում է: Իտալիայում այդ ցուցանիշը 0,11 հա է, Գերմանիայում՝ 0,14 հա, իսկ ԵՄ երկրների միջին ցուցանիշը 0.212 հա է:

Ռումինիան ունի հացահատիկի, յուղատու մշակաբույսերի, մրգերի ու բանջարեղենի մասնագիտացված արտադրություն և մինչև նախորդ դարի 1980-ական թվականների վերջը, սննդամթերքի հիմնական տեսակների առումով, ինքնաբավ էր: Այդուհանդերձ, 1990-ականների սկզբին ագրարային վերափոխումները բացասաբար են ազդել գյուղատնտեսության ոլորտի վրա, որի վիճակը չի բարելավվել անգամ Եվրամիությանն անդամակցելուց հետո: Դիցուք՝ գյուղատնտեսության գլխավոր արտադրանքներից ցորենի բերքատվությունը կազմում է ԵՄ միջինի 37,1%-ը, իսկ եգիպտացորենի բերքատվությունը՝ 49,3%, ինչը ցածր է տարածաշրջանի շատ երկրների ցուցանիշից[13]: Հետաքրքրական է այն փաստը, որ Ռումինիան արևածաղկի ամենամեծ արտադրողն է Եվրոպայում, ինչպես նաև եգիպտացորենի և սոյայի երեք խոշորագույն արտադրողներից մե-

[12] Agricultural Sectors - Machinery and Equipment; https://www.trade.gov/country-commercial-guides/romania-agricultural-sectors-machinery-and-equipment

[13] Лукиан В. Современное состояние и барьеры развития сельского хозяйства Румынии // Московский экономический журнал. 2022. № 10. URL: https://qje.su/selskohozyajstvennye-nauki/moskovskij-ekonomicheskij-zhurnal-10-2022- 34/

ԱՂՅՈՒՍԱԿ 3

Հիմնական պարենային ապրանքների արտադրությունը, ներմուծումը և արտահանումը Ռումինիայում[14]

Ցուցանիշները	Տարիներ	Արտադրություն, հազ. տոննա	Ներմուծում, հազ. տոննա	Արտահանում, հազ. տոննա
Բուսական ծագման արտադրանք				
Հացահատիկ և հատիկաընդեղեն	2020	19,089	3,981	11,525
	2019	30,017	2,353	14,204
	2018	31,112	2,063	12,066
Կարտոֆիլ	2020	2,699	518	24
	2019	2,627	535	38
	2018	3,022	405	43
Բանջարաբոստանային	2020	3,605	910	90
	2019	3,766	865	135
	2018	3,990	845	133
Մրգեր	2020	2,527	1,328	108
	2019	2,465	1,314	113
	2018	2,958	1,265	98
Շաքար	2020	187	478	126
	2019	292	492	122
	2018	137	494	111
Կենդանական ծագման արտադրանք				
Կաթ և կաթնամթերք (առանց կարագի), մլն լ	2020	52,812	11,251	2,437
	2019	52,568	10,378	2,464
	2018	52,835	10,428	2,791
Ձու, մլն հատ	2020	5,446	464	316
	2019	5,564	430	381
	2018	5,713	348	428
Ձուկ և ձկնամթերք	2020	19	110	8
	2019	24	140	12
	2018	23	112	6
Միս և մսամթերք	2020	1,028	560	153
	2019	1,046	580	163
	2018	1,035	574	171

Աղբյուրը՝ National Institute of Statistics, Tempo online database, Available at: http://statistici.insse.ro:8077/tempo-online/

կը: Թեև 2022 թվականի երկարատև երաշտի և շոգի պատճառով այդ արտադրանքների արտադրությունը 2021 թ.-ի համեմատությամբ նվազել է մոտ 30 տոկոսով, բայց 2023 թվականին ապահովվել է 27 տոկոս աճ: 2018-2022 թթ. միջին տվյալներով՝ հացահատիկային և յուղատու մշակաբույսերի բերքի մոտ 60 տոկոսն արտահանվում է[15]: Պարենային անվտանգության առումով, հատկապես անասնաբուծական ապրանքների մեծ մասի (միս, կաթ, կարագ, ձու և այլն) գծով Ռումինիան կախված է ներմուծումից, իսկ բանջարեղենի և մրգերի ինքնաբավության մակարդակը մոտ 70-80% է: Ռումինիայի ազգային վիճակագրության ինստիտուտի տվյալներով՝ 2022 թվականի նոյեմբերին տարեկան գնաճը հասել է 16,8%-ի, պա-

[14] Cite: Mateoc-Sîrb, N.; Bacău, C.-V.; Duma-Copcea, A.; Mateoc-Sîrb, T.; Mănescu, C.; Ni.ă, S.; Sicoe-Murg, O.; Suster, G. Agricultural trends in Romania in the context of the current trends of the world economy. Journal of Applied Life Sciences and Environment 2022, 55 (3), 335-350. https://doi.org/10.46909/alse-552068

[15] Agricultural Products; https://www.trade.gov/country-commercial-guides/romania-agricultural-products

ՆԿԱՐ 3

Ռումինիայի գյուղատնտեսությունում դեռևս գերակշռում է ձեռքի աշխատանքը

րենային ապրանքների գներն աճել են 21,6%-ով (բուսական յուղը թանկացել է 40,7%-ով, ալյուրը՝ 35%-ով, հացը՝ 29%-ով)[16]: Պարենային ապրանքների գների աճը փոփոխություններ է առաջացրել երկրի քաղաքացիների սպառողական վարքագծում, քանի որ սննդամթերքի բաժինը կազմում է միջին ռումինական տնային տնտեսության ծախսերի մոտավորապես մեկ երրորդը, իսկ հացի սպառումը՝ տարեկան մոտ 94 կգ: Ռումինացիների 80%-ը սկսել է հրաժարվել սովորական սննդակարգից՝ անցում կատարելով ավելի էժան սննդամթերքի սպառմանը:

2022 թվականի դեկտեմբերին ԵՄ հանձնաժողովը հաստատել է Ռումինիայի ազգային ռազմավարական ծրագիրը, որի նպատակն է բարելավել գյուղացիական տնտեսությունների տնտեսական կենսունակությունը, նվազեցնել գյուղացիական տնտեսությունների միջև եկամուտների տարբերությունը և բարձրացնել գյուղատնտեսության ոլորտի մրցունակությունը: Ծրագրի ընդհանուր բյուջեն 2023-2027 թվականների համար 16,6 միլիարդ ԱՄՆ դոլար է, որը նախատեսված է ֆերմերների աջակցության և գյուղական շրջանների զարգացման ենթածրագրերի իրականացման համար: Արդեն իսկ 2022 թվականին Ռումինիայի գյուղատնտեսական ձեռնարկությունների համախառն արտադրանքը գրանցել է վերջին 10 տարում երկրորդ ամենաբարձր անվանական տարեկան աճը՝ հասնելով պատմական առավելագույնին՝ 68 միլիարդ լեյ: Դեռևս չեն հրապարակվել 2023 թ. պաշտոնական տվյալները, սակայն KeysFin-ի (KeysFin՝ Ռումինիայի տեղեկատվական ֆինանսական հաշվետվություն) վերլուծաբանները կանխատեսում են, որ համախառն արտադրանքի շեմը կգերազանցի 80 միլիարդ լեյը: Այս լավատեսական զարգացմանը կարող են նպաստել կայուն գնաճային ճնշումները և հացահատիկի արտադրության՝ շուրջ 24% ակնկալվող աճը: Ռումինիայի ֆինանսական գործակալության տնտեսական վերլուծաբան Դիանա Ֆլորեսկուն ընդգծում է հատկապես ենթակառուցվածքներում կատարվող ներդրումների առաջնահերթությունը և գյուղատնտեսության ոլորտի արդիականացումը: «Ռումինիան պետք է հետևի Լեհաստանի օրինակին և ներդրումներ կատարի վերամշակման մեջ, որպեսզի դառնա բարձր ավելացված արժեքով գյուղատնտեսական արտադրանքի զուտ արտահանող»[17]: Այդուհանդերձ, Ռումինիան դրական տեղաշարժեր է գրանցում հիմնական պարենային ապրանքների ինքնաբավության առումով: Բավական է նշել, որ կորոնավիրուսի համավարակից հետո հացահատիկային ապրանքների ինքնաբավության գործակիցը 223.9% է, կարտոֆիլինը՝ 90.8%, բանջարեղենինը՝ 84.3%, մրգերինը՝ 65.8%, շաքարավազինը՝ 54.8%, խոզի մսինը՝ 72.7%, թռչնամսինը՝ 92.2%, տավարի մսինը՝ 85,0%, ոչխարի և այծի մսինը՝ 126,1%, կաթինը՝ 86,8% ձվինը՝ 97,5%[18]: Կալորիականության տեսանկյունից, սննդի սպառումը մեկ անձի հաշվով կազմել է 3550 կկալ/օր/մարդ, որն ավելի բարձր է, քան սննդաբանների գնահատած կալորիականության նորման (մոտավորապես 2900 կկալ/օր/մարդ):

Անցում կատարելով երկրում հայ համայնքին և վերջինիս գործունեությանը՝ նշենք, որ Ռումինիայում հայերը բնակություն են հաստատել դեռևս 11-12-րդ դա-

[16] Inflation breaks the record in November: 16.8%; food products, the most expensive, https://www.romanianbusinessjournal.ro/inflation-breaks-the-record-in-november-16-8-food-products-the-most-expensive/

[17] Сельское хозяйство Румынии на подъеме: выдающиеся показатели и перспективы развития. https://dailyhub.news/ru/romania/news/1000272/

[18] National Institute of Statistics, Tempo online database, Available at: http://statistici.insse.ro:8077/tempo-online/

ԱՂՅՈՒՍԱԿ 4

Հայաստանի և Ռումինիայի արտաքին ապրանքաշրջանառությունը (հազ. ԱՄՆ դոլար)

Տարիները	Ընդամենը արտաքին առևտուրը	Ներմուծում	Արտահանում
2019	15160,9	15023,3	137,6
2020	10562,9	10455,0	107,9
2021	19280,0	19120,9	159,4
2022	29188,8	28991,9	196,9

Աղբյուրը՝ https://www.mfa.am/hy/bilateral-relations/ro

ռերում: Հայ բնակչության թվաքանակը ստվարացել է հատկապես համիդյան ջարդերից և հայոց ցեղասպանությունից հետո՝ հասնելով շուրջ 30-40 հազարի: Երկրում կոմունիստական ռեժիմի հաստատումից հետո հայերի մի զգալի հատված տեղափոխվել է այլ երկրներ, մի մասն էլ ժամանակի ընթացքում ձուլվել է: Այսօր Ռումինիայում պաշտոնապես ապրում է մինչև 2000 հայ, սակայն հայկական արմատներ ունեցողների թիվը շատ ավելի է[19]: Ռումինահայերն ավանդաբար ակտիվ մասնակցություն ունեն երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային ոլորտներում, որը կարևոր նախապայման է Հայաստանի Հանրապետության հետ բարեկամական հարաբերությունների զարգացման համար:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2019-2022 թթ., բացառությամբ 2020 թ.-ի 44-օրյա պատերազմի և կորոնավիրուսի համավարակի ակտիվ շրջանը, Ռումինիայի և Հայաստանի միջև տարեցտարի ավելանում է ապրանքաշրջանառությունը (աղյուսակ 4):

Որքանով են Հայաստանի և Ռումինիայի գյուղատնտեսական ոլորտները համադրելի: Նախ՝ երկու երկրներն էլ հետսոցիալիստական են և անցել են հողի սեփականաշնորհման բարդ փուլերով: Երկրորդ՝ երկու երկրներում էլ հողային բարեփոխումների արդյունքում ձևավորվել են մեծ թվով, բայց փոքր չափերով տնտեսություններ, որոնք ունեն մեքենաապահովվածության ցածր մակարդակ: Համեմատության համար նշենք, որ ԵՄ-ում 13 հա մշակովի հողին բաժին է ընկնում մեկ տրակտոր, իսկ Ռումինիայում այդ ցուցանիշը 54 հա է: Ավելին, Ռումինիայում կա ընդամենը 170 հազ. տրակտոր, ընդ որում, 80%-ը՝ հին: Երկու երկրներում էլ բավական մեծ է գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների թիվը:

ՀՀ-ի հետ առևտուր անելու համար, կարծում ենք, բավական նպաստավոր է Կոնստանցա նավահանգիստը: 2022 թվականին վերջինս սպասարկել է 75,5 միլիոն տոննա բեռ, որը 11,9%-ով գերազանցում է 2021 թվականի ցուցանիշը և ռեկորդային է առնվազն վերջին 8 տարվա համար: Ըստ բեռների տեսակի՝ ավելի մեծ քանակություն են կազմել հացահատիկը՝ 24, նավթը՝ 9,5 և նավթամթերքը՝ 7,2, ինչպես նաև օրգանական և քիմիական պարարտանյութերը՝ 4,5 մլն տոննա :

Այսպիսով՝ Ռումինիան, որն անդամակցել է Եվրամիությանը 2007 թ. հունվարի 1-ին և ավելի քան մեկ ու կես տասնամյակ ձգտում է հարմարվել Եվրամիության ընդհանուր ագրարային քաղաքականության պահանջներին ու ձեռք բերել զարգացած գյուղատնտեսություն ունեցող երկրի հեղինակություն, դեռևս կանգնած է բազմաթիվ դժվարությունների ու մարտահրավերների առջև: Դրանց մի մասը չափազանց նման է Հայաստանի ագրարային ոլորտի հիմնախնդիրներին: Ուստի այս երկրի զարգացման ընթացքի և ագրոպարենային ոլորտի կարևորագույն ծրագրերի ուսումնասիրությունը հնարավորություն կտա ավելի իրատեսորեն գնահատելու ՀՀ զարգացման հեռանկարները:

[19] Ռումինիա: http://diaspora.gov.am/hy/pages/79/romania

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սամվել Ավետիսյան, Ինչո՞ւ են բողոքում Եվրոպայի ֆերմերները. պատճառներ և հետևանքներ, ՀՊՏՀ «Ամբերդ» տեղեկագիր, թիվ 2, էջ 27-35:
2. Ռումինիա: http://diaspora.gov.am/hy/pages/79/romania
3. Երկկողմ հարաբերություններ, Ռումինիա: https://www.mfa.am/hy/bilateral-relations/ro
4. Порт Констанца по итогам 2022 г.; https://gmk.center/news/port-konstanca-po-itogam-2022-goda-uvelichil-perevalku-rudy-na-46-9-g-g/
5. National Institute of Statistics, Tempo online database, Available at: http://statistici.insse.ro:8077/tempo-online/
6. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2023 թ.: https://armstat.am/file/doc/99541108.pdf
7. ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գյուղատնտեսության համատարած հաշվառման հիմնական արդյունքները, Եր.: «Տիգրան Մեծ», 2016, էջ 57:
8. Поддержка развития сельских районов Румыния - Европейская комиссия https://ec.europa.eu/agriculture/rural-development-previous
9. Лукиан В., Стратегические подходы преодоления сдерживающих факторов экономического развития АПК: на примере Румынии// Научный сетевой журнал «Столыпинский вестник» № 9/2022, https://cyberleninka.ru/article/n/strategicheskie-podhody-preodoleniya-sderzhivayuschih-faktorov-ekonomicheskogo-razvitiya-apk-na-primere-rumynii
10. Экспортная стратегия Румынии на 2021-2025 гг. с развитием до 2030 г., Министерство экономики Румынии, 2020 г.; https://www.revistamobila.ro/tag/strategia-de-export-a-romaniei-2021-2025/
11. Quo vadis, агро Румынии? https://agroportal.ua/ru/blogs/quo-vadis-agro-rumynii
12. Agricultural Sectors - Machinery and Equipment, https://www.trade.gov/country-commercial-guides/romania-agricultural-sectors-machinery-and-equipment
13. Лукиан В., Современное состояние и барьеры развития сельского хозяйства Румынии // Московский экономический журнал. 2022. № 10. URL: https://qje.su/selskohozyajstvennye-nauki/moskovskij-ekonomicheskij-zhurnal-10-2022- 34/
14. National Institute of Statistics, Tempo online database, Available at: http://statistici.insse.ro:8077/tempo-online/
15. Лукиан В., Сельское хозяйство Румынии: вызовы и проблемы.
16. Agricultural Products; https://www.trade.gov/country-commercial-guides/romania-agricultural-products
17. Inflation breaks the record in November: 16.8%; food products, the most expensive., https://www.romanianbusinessjournal.ro/inflation-breaks-the-record-in-november-16-8-food-products-the-most-expensive/
18. Сельское хозяйство Румынии на подъеме: выдающиеся показатели и перспективы развития. https://dailyhub.news/ru/romania/news/1000272/

Самвел АВЕТИСЯН
Старший эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ, доктор экономических наук, профессор

АРМЕНИЯ И МИР

РАЗВИТИЕ АГРАРНОГО СЕКТОРА РУМЫНИИ И ОБЩИЕ ЧЕРТЫ С АРМЕНИЕЙ

Среди стран ЕС Румыния ближе всего к Армении с точки зрения организации сельского хозяйства. Здесь также довольно велико число землевладельцев (около 2,84 млн.), а количество земли на одно хозяйство сравнительно невелико. Около 1,06 млн собственников имеют менее 0,5 га земли, что негативно влияет на конкурентоспособность сельского хозяйства. Сельское хозяйство Румынии отличается от бывших социалистических стран тем, что степень фрагментации земель очень высока. Кроме того, возможности механизации сравнительно невелики. Достаточно отметить, что один трактор обрабатывает около 53 га посевных площадей, а в ЕС этот показатель составляет 14 га. В то же время Румыния выделяется относительно равнинным рельефом, плодородными почвами и благоприятным климатом для сельского хозяйства.

Цель данной статьи - изучить аграрный сектор Румынии, относительно близкий по сельскохозяйственным условиям к Армении среди стран ЕС, провести некоторые сравнения, попытаться найти схожие проблемы и особенности их решения.

Ключевые слова: *Евросоюз, сельское хозяйство, Румыния, общие черты, Армения, эффективность, программы*

Samvel AVETISYAN
Senior Expert at «Amberd» Research Center, ASUE,
Doctor of Economic Sciences, Professor

ARMENIA AND THE WORLD

DEVELOPMENT OF THE AGRICULTURAL SECTOR IN ROMANIA AND COMMON FEATURES WITH ARMENIA

Among the EU countries, Romania is the closest to Armenia in terms of agricultural organization. Here, too, the number of landowners is quite large (about 2.84 million) and the amount of land per household is relatively small. Approximately 1.06 million owners have less than 0.5 hectares of land, which negatively affects the competitiveness of agriculture. Romania's agriculture differs from that of former socialist countries due to the high degree of land fragmentation . In addition, the possibilities of mechanization are relatively small. For instance, one tractor serves about 53 hectares of cultivated land, compared to 14 hectares in the EU on average. At the same time, Romania stands out for its relatively flat terrain, fertile soils and favorable climate for agriculture.

The purpose of this paper is to study Romania - a EU country that shares similar agricultural conditions with Armenia - make certain comparisons, find similar problems and specific solutions.

Keywords: *European Union, agriculture, Romania, common features, Armenia, efficiency, programs*